



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1948  
Դեկտեմբեր 22, 1994

Հոգեշնորհ  
Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան  
Հովիտ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ  
Ֆերմն.

Սիրելի Հայր Վահան,

Առաջնորդարանիս կողմէ հաստատուած աւանդութեան համաձայն՝ Սրբոց Վարդանանց տօնին առթիւ Ս. Պատարագ կը մատուցուի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ, եւ ապա ճաշկերոյթ կը տրուի Հայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսասրահին մէջ եւ մասնաւոր յայտագիր կը գործադրուի:

Յառաջիկայ տարի Սրբոց Վարդանանց տօնը կը զուգահիսի Փետրուար 23-ին, Հինգշաբթի:

Անցնող տարուան նման, յառաջիկայ տարի եւս, յայտագրին իր մասնակցութիւնը պիտի բերէ Ս. Վարդան Մայր Տաճարի եւ շրջանի Հայ Եկեղեցիներու դպրաց դասերու անդամներէն կազմուած երգչախումբը՝ ղեկավարութեան խմբավար Խորէն Մէլիսանէճեանի:

Այս գրութեամբ կը հրաւիրենք Եկեղեցոյդ դպրաց դասի անդամները՝ որպէս զի իրենց մասնակցութիւնը բերեն մեր ազգային այս գլխաւոր տօնի յիշատակումին: Խմբավար Խորէն Մէլիսանէճեան պատրաստ է Յունուար ամսուան ընթացքին այցելել ձեր համայնքը եւ կատարել փորձերը ձեր դպրաց դասի անդամներուն հետ:

Եկեղեցոյդ դպրապետին հետ հաճեցէք ընտրել փորձերու համար յարմար օրերը, եւ երբ խմբավար Մէլիսանէճեան հաղորդակցութեան մէջ մտնէ ձեզի հետ՝ տեղեկացնել անոր, ընելու համար անհրաժեշտ կարգադրութիւնները:

Սիրոյ ողջումի

ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ